Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
Ռեկտոր՝ Մ. Մանկիչյան

Հաստատված է
Հյուսիսային համալսարանի
գիտական խորհրդի 2020թվականի
դեկտեմբերի «29»-ի որոշմամբ (արձ. № 37)

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Պետական ընդհանուր դրույթներ

1.1. Հյուսիսային համալսարանում (այսուհետև՝ համալսարան) ուսանողների մասնագիտական պրակտիկան (այսուհետ՝ ***պրակտիկա***) կազմակերպվում և իրականացվում է բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչին համապատասխան՝ պահպանելով կրթական գործընթացի անընդհատության, հաջորդայնության և շարունակականության սկզբունքը:

1.2. Յուրաքանչյուր ուս.տարվա սկզբին, համալսարանի շրջանավարտների և պրակտիկայի համակարգողը՝ հիմք ընդունելով մասնագիտական ամբիոնների կողմից նախապես ներկայացված համապատասխան կազմակերպությունների ցանկալի ցանկը, պետք է ապահովի ըստ մասնագիտությունների պրակտիկայի կազմակերպման անհրաժեշտ, ուսանողների թվաքանակը ապահովող պայմանագրեր:

1.3. Սույն կանոնակարգով սահմանվում են համալսարանի պրակտիկայի կազմակերպման կարգը, պրակտիկայի տեսակները, պրակտիկայի կազմակերպման գործընթացին ներգրավված անձանց գործառույթները և գնահատման կազմակերպումը:

1.4 . Պրակտիկան ուսանողի հիմնական կրթական ծրագրի բաղադրիչն է:

1.5. Պրակտիկան ուսումնական գործունեության տեսակ է, որի բովանդակությունը ուսումնական, հետազոտական, գիտական, մանկավարժական, ստեղծագործական բնույթի գործնական խնդիրների լուծումն է՝ մասնագիտությանը համապատասխանող գործունեություն իրականացնող կազմակերպություններում և համապատասխան պետական (համայնքային) մարմիններում (այսուհետ՝ ***կազմակերպություն***):

1.6. Պրակտիկայի նպատակը ուսանողների կոմպետենցիաների զարգացումն է, մասնագիտական և կազմակերպչական կարողությունների ձեռքբերումը կոնկրետ գործունեության ընթացքում, ինչպես նաև ուսումնական նախագծերի, ինքնուրույն հետազոտական աշխատանքների համար ուսումնական ռեսուրսների հավաքագրումն ու ընդհանրացումը:

1.7. Պրակտիկայի ղեկավարումն իրականացվում է համալսարանի շրջանավարտների և պրակտիկայի համակարգողի, համապատասխան ֆակուլտետի, մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի և պրակտիկայի բազայի կողմից նշանակված համապատասխան մասնագետների միջոցով:

2. Պրակտիկայի կազմակերպումը

2.1. Պրակտիկան կազմակերպվում և իրականացվում է համալսարանի ռեկտորի հրամանով՝ բուհի և պրակտիկան կազմակերպող կազմակերպությունների միջև նախօրոք կնքված պայմանագրերի և ուսումնական պլանի հիման վրա:

2.2. Պրակտիկայի անցկացման ժամկետները սահմանվում են համալսարան ֆակուլտետների կողմից՝ հաշվի առնելով մասնագիտական կրթական ծրագրերը /ՄԿԾ/:

2.3. Ուսանողների պրակտիկայի օրագրերի ձևանմուշը մշակում է համալսարանի ուսումնական վարչությունը:

2.4. Մասնագիտական ծրագիրն իրականացնող ամբիոնները իրենց մասնագիտությունների գծով պետք է ունենան ամբիոնում քննարկված, ուսումնական վարչության հետ համաձայնեցված և ֆակուլտետի խորհրդի նիստով հաստատված պրակտիկայի նկարագրերը:

2.5. Պրակտիկայի գործընթացը անմիջականորեն կազմակերպում և վերահսկում են բուհի և համապատասխան կազմակերպության կողմից նշանակված ղեկավարներները:

2.6. Պրակտիկան սկսելուց ոչ պակաս քան 10 օր առաջ, պրակտիկայի բաժնի համակարգողը՝ հիմք ընդունելով ֆակուլտետների դեկանատներից նախօրոք ստացած տեղեկատվությունը, համապատասխան կազմակերպությանը գրավոր տեղեկացնում է պրակտիկա մեկնող ուսանողների նախնական թվի, պրակտիկայի ժամկետների և նկարագրի մասին:

2.7. Ամբիոնների կողմից, որպես կանոն, պրակտիկայի ղեկավարներ են նշանակվում համալսարանի այն դասախոսները, ովքեր ունեն մասնագիտական և մեթոդական բարձր պատրաստվածություն, հետազոտական աշխատանքի փորձ:

2.8. Պրակտիկան սկսվելուց առնվազն 14 օր առաջ, ֆակուլտետի դեկանը՝ պրակտիկայի ժամանակացույցին համապատասխան, համալսարանի շրջանավարտների և պրակտիկայի համակարգողին պետք է ներկայացնի ուսանողների պրակտիկայի կազմակերպման մասին համապատասխան զեկուցագրեր՝ յուրաքանչյուր կազմակերպության համար՝ նշելով մասնագիտական ամբիոնի կողմից ընտրված ղեկավարի, պրակտիկա մեկնող ուսանողների մասին տվյալները և պրակտիկայի անցկացման կազմակերպության անվանումը: Իրավիճակային փոփոխությունների առկայության դեպքում շրջանավարտների և պրակտիկայի համակարգողը առաջարկում է զեկուցագրում կատարել անհրաժեշտ փոփոխություններ:

Նշված զեկուցագրերի հիման վրա համալսարանի շրջանավարտների և պրակտիկայի համակարգողը կազմում է Համալսարանի ռեկտորի հրամանների նախագծերը:

2.9. Ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակահարմարությունից ելնելով, ֆակուլտետի խորհուրդը կարող է մասնակի փոփոխել պրակտիկայի ժամանակացույցը: Այդ մասին պրակտիկան սկսվելուց առնվազն 20 օր առաջ համալսարանի շրջանավարտների և պրակտիկայի համակարգողին պետք է ներկայացվի քաղվածք ֆակուլտետի խորհրդի համապատասխան արձանագրությունից:

2.10. Պրակտիկան սկսելուց ոչ պակաս, քան 7 օր առաջ ֆակուլտետներում կազմակերպվում է նախապատրաստական հանդիպում ուսանողների հետ (նախապատրաստական կոնֆերանս), որի ընթացքում ամբիոնի կողմից նշանակված ղեկավարը ուսանողներին ծանոթացնում է պրակտիկայի հիմնական փաստաթղթերի բովանդակությանը (թղթապանակ, աշխատանքային

տետրեր, հաշվետվության ձև, անհատական աշխատանքի պլանի ձև և այլն):

2.11. Պրակտիկայի ընթացքում, նախատեսված ժամաքանակի կեսից ավելիին չներկայացած, պրակտիկայի արդյունքում անբավարար գնահատականներ ստացած, պարբերաբար աշխատանքային կամ անվտանգության նորմերը խախտած ուսանողները համարվում են պրակտիկան չանցած, և ամբիոնի կողմից ընտրված ղեկավարը այդ մասին տեղյակ է պահում ֆակուլտետի դեկանին և շրջանավարտների և պրակտիկայի համակարգողին:

2.12. Պրակտիկան չանցած ուսանողների համար կարող է կազմակերպվել կրկնակի պրակտիկա՝ հաշվի առնելով նրանց ընթացիկ ուսումնական ծանրաբեռնվածությունը և հենվելով պրակտիկայի կազմակերպման կանոնակարգի հիմնական դրույթների վրա:

2.13. Կրկնակի պրակտիկայի մասին որոշումն ընդունում է ֆակուլտետի խորհուրդը, որի հիման վրա ֆակուլտետի դեկանը առավելագույնը 7 օրվա ընթացքում համալսարանի շրջանավարտների և պրակտիկայի համակարգողին է ներկայացնում զեկուցագիր 2.8. կետում նշված ձևաչափով:

2.14. Հնարավորության առկայության դեպքում կրկնակի պրակտիկան կազմակերպվում է միևնույն կիսամյակում, իսկ նման պայմանների բացակայության դեպքում՝ ոչ ուշ քան հաջորդ կիսամյակի ավարտը:

2.15. Անհատական կարգով պրակտիկան, որպես կանոն, կարող է կազմակերպվել Համալսարանի ռեկտորի հրամանով՝ այն կազմակերպություններում, որոնք մինչև պրակտիկայի կազմակերպումն առնվազն 20 աշխատանքային օր առաջ ներկայացրել են անհատական պրակտիկայի կազմակերպման համապատասխան պահանջագիր-հայտ: Անհատական պրակտիկայի համար կարող են դիմել սույն կանոնակարգի 2.16. կետով սահմանված կարգավիճակ ունեցող ուսանողները, ինչպես նաև Համալսարանի ռեկտորի հրամանով՝ այլ բացառիկ կարգավիճակ ունեցող ուսանողները:

2.16. Անհատական պրակտիկա, որպես կանոն, կազմակերպվում է այն ուսանողների համար, ովքեր՝

ա) բնակվում են հեռավոր, սահմանամերձ շրջաններում: Այս դեպքում պրակտիկան կարող է կազմակերպվել տվյալ բնակավայրում գտնվող համապատասխան կազմակերպությունում կամ համապատասխան պետական կառույցներում,

բ) հանդիսանում են սահմանված կարգով նպատակային տեղերում ընդունված ուսանող (պրակտիկան կազմակերպվում է համապատասխան հայտ ներկայացրած կազմակերպությունում).

գ) հղի են կամ ունեն մինչև երկու տարեկան երեխա,

դ) ունեն կրթական առանձնահատուկ պայմանների կարիք.

ե) աշխատում են իրենց մասնագիտությամբ: Այս դեպքում պրակտիկան անցկացվում է այն կազմակերպությունում, որտեղ նրանք աշխատում են.

զ) կրթությունը շարունակում են ակադեմիական շարժունության, շարունակական կրթության կարգով, վերականգնվել կամ շարունակել են իրենց ընդհատած ուսանողական իրավունքները.

է) իրականացնում են հետազոտական աշխատանք մագիստրատուրայի հետազոտական պրակտիկայի շրջանակներում: Այս դեպքում պրակտիկայի անցկացումը կարող է չհրամանագրվել և կազմակերպվում է անհատական հետազոտական պլանի և պրակտիկայի նկարագրի հիման վրա:

2.17. Անհատական պրակտիկայի կազմակերպման դիմում-հայտ ներկայացնող ուսանողները կից

պետք է ներկայացնեն սույն կանոնակարգի 2.16. կետով նախատեսված կարգավիճակը հավաստող փաստաթղթեր:

2.18. Պրակտիկայից վերադառնալուց հետո առնվազն 7, առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում մասնագիտական ամբիոնները դեկանատների հետ միասին կազմակերպում են ուսանողների պրակտիկայի արդյունքների պաշտպանություն, որից հետո 3 օրվա ընթացքում ֆակուլտետներում կազմակերպվում է պրակտիկայի ամփոփիչ հանդիպում (կոնֆերանս): Կոնֆերանսի ընթացքում բուհի կողմից նշանակված ղեկավարները ամփոփում են պրակտիկայի արդյունքները:

3. Պրակտիկայի տեսակները

3.1. Համալսարանում իրականացվում են պրակտիկայի հետեւյալ տեսակները,

ա) Ուսումնական պրակտիկա, որը, որպես կանոն, կազմակերպվում է տարբեր կազմակերպություններում և միտված է զարգացնելու բակալավրի ուսանողների գիտելիքներն ու կարողությունները իրենց մասնագիտական կամ հարակից ոլորտներում:

բ) Մասնագիտական պրակտիկա. կազմակերպվում է որպես կանոն տվյալ կամ հարակից ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպություններում և միտված է զարգացնելու ուսանողների՝ մասնագիտական գործունեություն իրականացնելու կարողություններն ու հմտությունները:

գ) Գիտահետազոտական կամ հետազոտական պրակտիկա, որպես կանոն, կազմակերպվում է անհատական կարգով և բխում է ուսանողի մագիստրոսական թեզի պահանջներից, բովանդակությունից և անհատական հետազոտական աշխատանքի պլանից:

դ) Գիտամանկավարժական կամ մանկավարժահետազոտական պրակտիկա. մանկավարժական պրակտիկայի տեսակ է, որը որպես կանոն, կազմակերպվում է միջին, արհեստագործական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում, միտված է մագիստրատուրայի ուսանողների՝ մանկավարժական գործունեություն իրականացնելու կարողությունների զարգացմանը:

4. Համալսարանի պրակտիկայի պատասխանատուների գործառույթները

4.1. Համալսարանում պրակտիկայի կազմակերպման և հսկողության համար անմիջական պատասխանատվություն են կրում *Համալսարանի* շրջանավարտների և *պրակտիկայի համակարգողը, ֆակուլտետի դեկանը, համապատասխան մասնագիտական ամբիոնները, ամբիոնային պրակտիկայի ղեկավարները:*

4.2 *Համալսարանի* շրջանավարտների և *պրակտիկայի համակարգողը.*

ա) Ապահովում է համալսարանի և պրակտիկան կազմակերպող այլ կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքումը (վերանայումը):

բ) Մշակում է պրակտիկային վերաբերող բոլոր անհրաժեշտ ձևանմուշները:

գ) Կատարում և կազմակերպում է կազմակերպությունների հետ պաշտոնական գրագրությունների գործընթացը:

դ) Ճշտում է տվյալ կիսամյակում, ըստ մասնագիտությունների պրակտիկայի ժամանակացույցը (օպերատիվ տեղեկատվության հիման վրա):

ե) Նախապատրաստում է պրակտիկայի մեկնող ուսանողների հրամանագրման գործընթացը:
զ) Վերահսկում է պրակտիկայի ընթացքը՝ պրակտիկայի ամբիոնային ղեկավարների և այլ պատասխանատուների գործունեությունը:
է) Համապատասխան կազմակերպություններից պրակտիկայի ղեկավարման մեջ ընդգրկված աշխատողների վարձատրությունն իրականացնելու նպատակով համալսարանի հաշվապահություն է ներկայացնում համապատասխան ֆինանսական փաստաթղթեր (հարկային հաշիվ, կատարողական ակտեր, տեղեկագրեր, հաշվառման թերթեր և այլն).

4.3 *ֆակուլտետի ղեկանը*
ա) Կազմակերպում է ֆակուլտետի պրակտիկայի նախապատրաստական և ամփոփիչ կոնֆերանսները:
բ) Նախապատրաստում և համալսարանի շրջանավարտների և պրակտիկայի համակարգողին է ներկայացնում կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի ցանկը (ցանկալի) և ըստ պրակտիկայի անցկացման վայրերի տեղաբաշխված ուսանողների ցուցակը:
գ) Համալսարանի շրջանավարտների և պրակտիկայի համակարգողին է ներկայացնում պրակտիկայի արդյունքների վերաբերյալ ֆակուլտետային կիսամյակային հաշվետվություն:
դ) Թույլատրում կամ մերժում է անհատական պրակտիկա անցնելու նպատակով և պրակտիկա չանցած կամ պրակտիկան ձախողած ուսանողների կրկնակի պրակտիկա անցնելու դիմումները:

4.4 *Մասնագիտական ամբիոն*
ա) Նշանակում է պրակտիկայի ղեկավարներ:
բ) Կազմակերպում է պրակտիկայի արդյունքների պաշտպանությունները և ուսանողների գնահատումը:
գ) Պրակտիկաների բովանդակային նկարագրերի (նկարագիր/պլան/ ծրագիր) ստեղծում:
դ) Կազմակերպում է պրակտիկայի նախապատրաստական և ամփոփիչ կոնֆերանսները:
ե) Ֆակուլտետի դեկանին է ներկայացվում պրակտիկայի արդյունքների վերաբերյալ ամբիոնային կիսամյակային հաշվետվություն:
զ) Պրակտիկա անցած ու գնահատված ուսանողների ամփոփիչ հաշվետվությունները պահվում են ամբիոնում:

4.5. *Ամբիոնային պրակտիկայի ղեկավարը*
ա) Ամբիոնի նիստերում նախապատրաստում և ներկայացնում է պրակտիկայի գործընթացին վերաբերվող հարցերը:
բ) Վերահսկում և գնահատում է պրակտիկայի ընթացքը և արդյունավետությունը:
գ) Ամբիոնային պրակտիկայի պատասխանատուները յուրաքանչյուր պրակտիկայի ավարտին պետք է ամբիոն ներկայացնեն հաշվետվություն իրենց կատարած աշխատանքների մասին:

5. Պրակտիկայի գնահատման կազմակերպումը

5.1. Ոչ ուշ քան տվյալ կիսամյակի ավարտը ֆակուլտետում կազմակերպվում է ուսանողների

պրակտիկայի արդյունքների գնահատում ամբիոնային ղեկավարի կողմից՝ համաձայն հաստատված առարկայական նկարագրի գնահատման չափանիշների:

5.2. Պրակտիկայի գործընթացի գնահատման արդյունքները պետք է քննարկվեն մասնագիտական ամբիոններում և ֆակուլտետների խորհուրդներում յուրաքանչյուր կիսամյակի վերջում և ամփոփ ներկայացվեն ֆակուլտետի պրակտիկայի կիսամյակային և տարեկան հաշվետվության մեջ՝ համաձայն նախօրոք մշակված ձևանմուշի:

5.3. Պաշտպանության արդյունքների մասին ամփոփ տեղեկությունները 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են համալսարանի շրջանավարտների և պրակտիկայի համակարգողին:

5.4 Պրակտիկայի գնահատումն իրականացվում է ըստ համալսարանի ուսանողների պրակտիկայի արդյունքների պաշտպանության ընթացակարգի:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն կանոնակարգը, դրա փոփոխությունները և լրացումները հաստատվում են Համալսարանի գիտական խորհրդի կողմից: